ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Մեղրի, +374 286 4-34-23, +374 286 4-34-37, meghri.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մայիսի 2019 թվականի N 165

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 21 հունվարի 2019թ <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին>> N3-Ա որոշման 13.3 կետի 13.3.4 ենթակետի, ս/թ մայիսի 6-ին Մեղրի համայնքի Ալվանք գյուղում, ս/թ մայիսի 10-ին Մեղրի համայնքի Շվանիձոր գյուղում՝ անց է կացվելու շտաբային ուսումնավարժություն «Օդերևութաբանական երևույթների կանխատեսման և հնարավոր կարկտահարության դեմ միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով: Ուսումնավարժության կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ նշանակել Վանիկ Սարգսյանին:
2 Շտաբը համալրել համապատասխան ծառայության պետերով և կազմավորումների հրամանատարներով, պատրաստ վիճակի բերել համայնքի ուժերը և միջոցները:
3. Ուսումնավարժությունում ընդգրկել՝ Մեղրիի համայնքապետարանի ղեկավար կազմին, կազմավորումների հրամանատարներին և Ալվանք գյուղի վարչական ղեկավարին:
4.Հաստատել ուսումնավարժության նախապատրաստման պլանը, օրացուցային պլանը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետում կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2019թ. մայիսի 3
ք. Մեղրի